Մրցույթի մասնակցության հրավեր

Ամսաթիվ: 25 դեկտեմբեր 2024
Վարկի համար և վերնագիր: 4371- ARM: Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր
Պայմանագիր՝ YUDIP-CW-01: Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցում
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 6 փետրվարի 2025 թ.՝ ժամը 15:00 (տեղական ժամով)

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստացել է վարկ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Երևանի քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի (այսուհետև՝ Ծրագիր) ֆինանսավորման նպատակով: Այս ֆինանսավորման մի մասը կօգտագործվի վերոնշյալ պայմանագրով նախատեսված վճարումների համար: Մրցույթը բաց է ԱԶԲ իրավասու երկրների հայտատուների համար:
2. Երևանի քաղաքապետարանը («Պատվիրատու») իրավասու հայտատուներին հրավիրում է ներկայացնելու կնքված հայտեր՝ Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման համար: Ճանապարհահատվածը գտնվում է Երևանի Շենգավիթ, Կենտրոն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների սահմաններում/տարածքում, Երևան քաղաքի կենտրոնից մոտավորապես 3 կմ հարավ-արևմուտք («Աշխատանքներ»):
3. Բաց մրցակցային մրցույթը (միջազգային գովազդ) կանցկացվի ԱԶԲ-ի «Մեկ փուլ, մեկ ծրար» ընթացակարգով: Այն բաց է ԱԶԲ իրավասու երկրների բոլոր հայտատուների համար, ինչպես նկարագրված է Մրցութային փաստաթղթում:
4. Մրցույթին կարող են մասնակցել միայն իրավասու այն հայտատուները, որոնք բավարարում են Մրցութային փաստաթղթում սահմանված որակավորման հետևյալ հիմնական պահանջները.

   <u>Ֆինանսական ցուցանիշների պատմություն</u>

   ֆինանսական վիճակի կայունությունը վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում:

   <u>Շինարարական միջին տարեկան շրջանառություն</u>

   Շինարարական աշխատանքների նվազագույն միջին տարեկան շրջանառությունը՝ 68 միլիոն (վաթսունութ) ԱՄՆ դոլար, վերջին 5 (հինգ) տարվա ընթացքում**:**

   <u>Ֆինանսական ռեսուրսներ</u>

   Հայտատուն պետք է հավաստի, որ իր ֆինանսական ռեսուրսները՝ հանած իր ընթացիկ պայմանագրային պարտավորություններից առաջացած ֆինանսական պարտավորությունները, բավարարում կամ գերազանցում են տվյալ պայմանագրի ընդհանուր պահանջը՝ 8,5 միլիոն (ութ միլիոն հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար:

   <u>Համարժեք չափի և բնույթի պայմանագրեր</u>

   Վերջին 6 (վեց) տարիների ընթացքում առնվազն մեկ պայմանագիր, որ բավարար և նշանակալիորեն ավարտված է և առաջարկվող աշխատանքներին համանման, որում հայտատուի մասնակցության արժեքը գերազանցում է 40,8 միլիոն (քառասուն միլիոն ութ հարյուր հազար) ԱՄՆ դոլարը:

<u>Շինարարական փորձ գործունեության հիմնական ոլորտներում</u>

Վերջին 6 (վեց) տարիների ընթացքում շինարարական փորձ գործունեության հետևյալ հիմնական ոլորտներում.

- ստորգետնյա ուղեանցի կառուցման փորձ՝ գոյություն ունեցող շենքերից 50մ հեռավորության վրա,
- բազմաթռիչք կամրջի կառուցում՝ առնվազն 270մ ընդհանուր երկարությամբ և առնվազն 15մ լայնությամբ,
- փոխհատումների/հանգույցների կառուցման փորձ՝ քաղաքային նշանակության փողոցներում/ճանապարհներում,
- երթևեկության կառավարման փորձ՝ քաղաքային նշանակության փողոցներում/ճանապարհներում՝ փոխհատումների/հանգուցների կառուցման ընթացքում:

Որակավորման ամբողջական չափանիշները նկարագրված են Մրցութային փաստաթղթում:

5. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և Մրցութային փաստաթուղթն ուսումնասիրելու համար հայտատուները կարող են դիմել.

   «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, սենյակ հ.622
   Անի Առաքելյանին, գնումների մասնագետ
   Բուզանդ 1/3, Երևան, Հայաստան, 0010
   Հեռ.: +374 11 51 40 05 (5014)
   Էլ. հասցե: arakelyan.ani@yerevan.am

6. **YUDIP-CW-01-Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման Մրցույթային փաստաթուղթն** անգլերեն լեզվով (էլեկտրոնային տարբերակ) անվճար ստանալու համար հայտատուները կարող են գրավոր դիմել վերոնշյալ էլ.հասցեով:

7. Հայտերը պետք է ներկայացվեն.

   - վերոնշյալ հասցեով,
   - մինչև վերջնաժամկետը՝ 2025թ. փետրվարի 6-ին՝ ժամը 15:00 (տեղական ժամանակով),
   - հայտի երաշխիքի հետ, ինչպես նշված է մրցութային փաստաթղթում:

Հայտերը կբացվեն վերջնաժամկետից անմիջապես հետո՝ հայտատուների այն ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել հայտերի բացմանը: